որ յառաջագոյն էր հիւսպատոսարան տէրութեան Ամանիոյ։ Այս է Գազաւոնի վանքն. եկեղեցին կանգնեալ է ՚ի վերայ 12 կարծրաքար սեանց, և թաղեալ մինչ ՚ի խոյեսիան, գմբէթին անկեալ և հնութիւնք եկեղեցւոյն խապատ ծածկեալ, թէպէտ տեղին ընդարձակ, սակայն լցեալ հողով և խանդարեալ է, և ուրեք ուրեք մանաւանդ ՚ի վերին յարկն նորանոր շինուածովք այլայլեալ և է այժմ ՚ի ձեռս սերնդոց Հոփոփ-ի կոչեցեալ այլազգեաց, որք պատմեցին մեզ թէ՝ էր յառաջագոյն եկեղեցի և վանք ՚ի ժամանակս Խաչակրաց, և ՚ի տիրելն Սալահատինոյ՝ գրաւեալ այլազգեաց արարին հիւրանոց կամ խան, և ապա չտեմարան ձիթախիւղոյ եւ այժմ է գործարան օճառի։ Գազաւան քաջ կամսարական ՚ի տոհմէ Նախարարաց որ կեաոյ եւ Արշակունի դրեցաւ (386 — 389)։

23°. Կամսարականաց վանքն, յանուն սրբոյ Լուսաւորչին շինեալ յԱրշակունեայ։

24°. Ամատունեաց վանքն. ՚ի կողմն սուրբ Սիոնի։

25°. Միւս եւս Ամատունեաց վանք գոյ անդ, ուր 100 կուսանք բնակին, թերեւս այժմեան Հրեշտակապետի վանքն է։

26°. Մամիկոնէից վանքն, յանուն սուրբ Կարապետին ՚ի կողմն Սիոնի, անյայտ։

27°. 28°. 29°. 30°. Չորս վանք ՚ի կողմն Սեբաստիոյ։

31°. Կառնայոց վանքն՝ շինեալ ՚ի Սմբատայ Բագրատունեաց։

32°. Սահառունեաց վանքն, զոր Բաբա վանք կոչեն, որ Տեառն եղբօրն է, զոր ընկալաւ վէմն (*)։

33°. Պալունեաց կամ Պալունեաց վանքն, ՚ի կողմն Գալիլեայ լերին։

34°. Ալ Անձեւացեաց վանքն, ՚ի նոյն կողմն։

35°. Պաղակունեաց վանքն, ՚ի նոյն կողմն, այժմ Տաճկիք ունին։

36°. Սրբոց Քառասնից վանքն, ՚ի նոյն կողմն։

(*) Ի սա ՚ի ձոյն Յովսափաթ ՚ի հարաւ կոյս արձանին Աբիսողոմայ, որպէս գրեցաք յառաջագոյն. յերեսս ժայռին երեւին դեռ պատուհանքն, յորոյ վերայ կառուցեալ էր սոյն վանքն. այժմ բոլորովին անյայտ, և տեղին լեալ գերեզմանատուն Հրէից։